«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մեթոդժամերի , խորհրդատվական քննարկումների դերն ու նշանակությունը որպես կրթական աշխատանքների արդյունավետության բարձրացման միջոց.

Դաստիարակ՝ Բաբայան Անի

Մանկապարտեզ՝ « 92 մսուր մանկապարտեզ » ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3-4

ԳԼՈՒԽ 1

1.1նախադպրոցական կրթության չափորոշիչների մասին

Դերն ու նշանակությունը.....9-10-11-12-13

ԳԼՈՒԽ 2

2.1Ծնողների հետ համագործակցության մասին

2.2Նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատանքները.

Սեմինար պարապմունք……..14-16

Տնօրենի եզրակացություն…….17

Եզրակացություն.....……18

Գրականության ցանկ 19

Ներածություն

Մեթոդը հունարեն <<մեթոդոս>> բառն է, նշանակում է՝ ուղի,եղանակ։ Ուսուցման մեթոդներ ասելով հասկանում ենք ունուցչի և աշակերտների փոխադարձաբար կապված գործունեության եղանակները, որոնք ուղղված են ուսուցման խնդիրների լուծմանը։ Մեթոդը ուսուցչի համար դասավանդման, իսկ աշակերտի համար՝ գիտելիքները, կարողություններն ու հմտությունները յուրացնելու եղանակ է։ Միաժամանակ՝ սովորողների գիտական աշխարհայացքը ձևավորելու, նրանց ընդունակություններն ու ստեղծագործական գործունեությունը զարգացնելու եղանակ։ Մեթոդը հասկացվում է նաև լայն իմաստով։ Օրինակ՝ դիալեկտիկական մատերիալիստական մեթոդը այն հիմնական ուղին է, որը տալիս է բոլոր մեթոդները. Ուսուցման մեթոդների ու հնարների հիմնական խնդիրն է միասնաբար լուծել սովորողների կրթության, դաստիարակության և զարգացման խնդիրները։ Մեթոդները ուսուցման գործընթացի բաղադրամասերն են, որոնք օգնում են իրագոր- ծել ուսուցման նպատակը, խնդիրները, բովանդակությունը, սովորողների համակող- մանի ու ներդաշնակ զարգացումը։

Ելնելով երկար տարիների մանկավարժական փորձից ու հետազոտություններից, առանձնացվում է երեք խումբ մեթոդներ։

Առաջին խումբ մեթոդների շարքին են դասվում գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ձեռք բերող, գիտելիքներն իմաստավորող ու ամրակայող մեթոդները,

Երկրորդ խմբում՝ ճանաչողական ակտիվությունն ու ստեղծագործական գործունեությունը զարգացնող մեթոդները,

Երրորդ խմբում՝ ինքնուրույն աշխատանքի մեթոդները։

Առաջին խմբի մեթոդների շարքին են դասում խոսքային, զննական և գործնական մեթոդները։ Երկրորդ խմբի մեթոդների շարքին են դասում ինդուկտիվ, դեդակտիվ, պրոբլեմային շարադրանքի, մասնակի որոնողական կամ էվրիստիկական հետազոտական մեթոդները։ Երրորդ խմբի մեթոդների շարքին ենք դասում նոր գիտելիքներ ձեռք բերելու ինքնուրույն աշխատանքը, ինքնուրույն ստեղծագործական աշխատանքները, աշխատանքը դասակարգի վրա մեթոդները։

Կադրերի ինքնակրթության կազմակերպումը և մասնագիտական զարգացման խնդիրները, մասնագիտական զարգացումը պահանջում է նախադպրոցական համակարգի մանկավարժների և ղեկավար կադրերի ակտիվ ներգրավում անընդմեջ ուսուցման մեջ և պայմանավորում նրանց ստեղծագործական ներուժի (քազաքացիական դիրքորոշում, իրազեկություն, կազմակերպվածություն և այլն) զարգացումը։Մանկավարժների գործունեության բոլոր ձևերում կարևոր է մանկավարժների որակավորման բարձրացումը։ Մանկավարժների համապատասխան մասնագիտական աճի և որակի ապահովումը նախատեսվում է վերապատրաստման դասընթացների տարաբնույթ ծրագրերով, թեմատիկ պլանավորումներով, սեմինար խորհրդակցություններով, խորհրդատվություններով, առաջավոր փորձի դիտումներով և այլ

ձևերով:Ժամանակը յուրաքանչյուր մանկավարժից պահանջում է ամենօրյա ինքնակրթություն: Նշված միջոցները կարող են ապահովել մասնագիտական և մեթոդական վարպետության, գիտական գրականության վրա ինքնուրույն աշխատելու և ստացած գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների ձևավորում: Մասնագիտական հմտությունների ձևավորման նպատակով կազմակերպվում են նաև սեմինար-պարապմունքներ, գործարար խաղեր, քննարկումներ և այլն:Դասընթացի ընթացքում կամ ավարտական թուլում մասնակիցները կարող են մշակել սեղմագրեր, ռեֆերատներ, պարապմունքների նմուշօրինակներ և այլն:

ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ նպատակաուղղված իմացական գործունեություն է, ինքնակառավարում, որևէ ոլորտի մասին գիտելիքների ձեռքբերում:

Ինքնակրթության պլան է ամրագրվում աշխատանքային գործունեության հարթագրման (պլանավորման) մեջ՝ նշելով թեման, աղբյուրները, հիմքերը, կարևոր գաղափարները, կատարման ժամանակը:

Մասնագիտական վարպետությունը պահանջում է հաղորդակցական, ինտելեկտուալ, վերլուծական և կազմակերպչական հմտություններ, գիտելիքներ, փորձ, քննադատական և տրամաբանական մտածողություն:

Ինքնակրթությունը կարող է լինել երկու տիպի:

իրականացվում է հաստատության հանձնարարությամբ կամ իր ցանկությամբ

մյուսը՝ ինքնուրույն, անձնական հետաքրքրություններով: Ինքնակրթության այս տեսակը լինում է ազատ ժամանակ և համարվում ինքնուրույն, ազատ գործունեության մի տեսակ, որը պարունակում է ինքնակրթության տարրեր: իրենց նշանակությամբ ինքնուրույն, ազատ գործունեությունը փոխկապակցված են և չեն կարող գործել առանց իրար: Այս գաղափարը հնարավորություն էտալիս խոսելու նախադպրոցականի ինքնակրթության մասին, որը կապված է մեծերի ուղղակի և միջնորդավորված ղեկավարման, նրանց կողմից ստեղծված առարկայական-զարգացնող միջավայրի և երեխաների ուշադրությունը գրավելու հետ: Երեխաների ինքնակրթության և ինքնուրույն գործունեության մաս են կազմում խաղերը, ընթերցումները, փորձարկումները, այցելությունները մշակութային կենտրոններ:

ԳԼՈՒԽ 1

1.1նախադպրոցական կրթության չափորոշիչների մասին

Նախադպրոցական կրթության չափորոշիչը կազմում է վաղ մանկության զարգացման ընդհանուր չափորոշչի բաղադրամաս և սահմանում նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակության նախագծման հիմնական ուղղությունները:

Նախադպրոցական կրթական չափորոշիչների բովանդակությանը պայմանականորեն տարանջատված է ոլորտ-տիրույթների և բաղադրիչների:

Չափորոշիչը նպատակաուղղված է նախադպրոցական տարիքի երեխայի իմացական շարժառիթների խթանմանը, նրա ինքնաճանաչման, ինքնադրսևորման, համակողմանի և ներդաշնակ զարգացման ապահովմանը, առողջ կենսակերպի հիմքերի ձևավորմանն ու սոցիալականացմանը:

Չափորոշիչը մշակվում է «Կրթության մասին» ՀՀ օրենսդրության, հանրակրթության պետական կրթակարգի, վաղ մանկության զարգացման հայեցակարգի և ռազմավարության պահանջներին համապատասխան:

Չափորոշիչը նաև կրթական հիմնական ծրագրերի նպատակների իրագործումը ցույց տվող չափանիշների կատարման ընդհանուր մակարդակն է, երեխայակենտրոն կրթության հիմքը, որը հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու երեխաների անձը, հենվելու երեխաների ուժեղ կողմերի վրա և խթանելու համատեղ ուսումնառություն:

Չափորոշիչը որոշակի է, հասանելի, իրատեսական, համապարփակ և ժամկետային:

Չափորոշիչի ներդրումը պարտադիր է նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար:

Չափորոշիչի հասկացությունն ու էությունը

Չափորոշիչը կանոնակարգող փաստաթուղթ է, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, երեխաների ուսումնական ծանրաբեռնվածության առավելագույն ծավալը և երեխաներին ներկայացվող որակական պահանջները:

Չափորոշիչին համապատասխան մշակվում են կրթական ծրագրեր, կանոնակարգող ակտերի նախագծեր, ուղեցույցներ, երաշխավորություններ, հաղորդաշարեր: Չափորոշչի հիման վրա կատարվում են դիտարկումներ և այլն: Այսինքն՝ չափորոշիչը համարվում է հայեցակարգերի, ծրագրերի (այդ թվում նաև վերապատրաստման տարբերակված ծրագրերի), մեթոդական ուղեցույցների մշակման, դրանց գործնականում ներդրման և ինչպես վերը նշվեց, երեխայակենտրոն կրթության իրականացման հիմք:

Չափորոշչի ձևավորման հիմնական սկզբունքներն են՝ երեխաների զարգացման և անհատական առանձնահատկությունների հաշվառումը, խաղի գերակայությունը և խաղային գործունեության, կրթական աշխատանքների անհատականացումը և պլանավորումը, մտքի և խոսքի ազատ դրսևորումը, ծնողների ներգրավումը մանկապարտեզի առօրյայում, երեխաների սահուն տարրական դպրոցի անցման կազմակերպումն ու իրականացումը, ստեղծագործական ունակությունների

զարգացումը, մասնավոր մեթոդիկաների տիրապետումը, զարգացնող առարկայական և ֆիզիկական միջավայրի ապահովումը:
Չափորոշիչի որակական պահանջները սահմանվում են ըստ տարիքի և զարգացման ոլորտների այնպես, որ հասանելի լինի անապահով ընտանիքներին:
Չափորոիչի հիման վրա աշխատանքը ակնկալում է միասնական հենքային դաշտի ստեղծում, կրթական ոլորտի զարգացում և նորացում, կադրերի մասնագիտական կատարելագործում, հիմնական արժեքային հարաբերությունների ձևավորում և այլն:
Չափորոշիչով սահմանված կրթության բովանդակության հասանելիությունն ապահովվում է զարգացման հիմնական ուղղություններին համապատասխան հետևյալ բաղադրիչներով՝ գիտելիք, կարողություն, հմտություն, արժեքային համակարգ:
Նախադպրոցական կրթության պետական կրթական, զարգացման և միջավայրային չափորոշիչները կազմում են վաղ մանկության զարգացման ընդհանուր չափորոշչի բաղադրամասեր և սահմանում նախադպրոցական երեխաների կրթական ծրագրերի բովանդակության նախագծման հիմնական ուղղությունները: Չափորոշչում նախադպրոցական կրթության բովանդակությունը ներկայացվում է պայմանականորեն տարանջատված կրթադաստիարչական ոլորտ-տիրույթների և բաղադրիչների միջոցով:
Չափորոշիչը նաև կրթադաստիարակչական հիմնական ծրագրերի նպատակների իրագործումը ցույց տվող չափանիշների կատարման ընդունված մակարդակն է:
Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմք:
Ըստ չափորոշչի, մշակվում են նաև միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունների նախադպրոցական ֆակուլտետների /բաժինների/ ուսումնական ծրագրեր և ծնողների կրթության ծրագրեր:
Չափորոշչի ներդրումը պարտադիր է նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար:

Չափորոշչին համապատասխան՝

1. Ստեղծվում է երեխաների անվտանգության, խնամքի ու կրթության համար անհրաժեշտ միջավայր, այդ թվում՝ շենքային ու սանիտարահիգիենիկ պայմաններ:
2. Մշակվում են նորմատիվ ակտերի նախագծեր, նախադպրոցական կրթության ծրագրեր, ուսումնամեթոդական փաստաթղթեր և նյութեր, այդ թվում՝ երեխաների ծնողների և խնամողների համար երաշխավորություններ, ուղեցույցներ, հանրամատչելի գրքույկներ, պատրաստվում են հեռուստատեսային և ռադիոհաղորդումներ:
3. Ստեղծվում են միջին և բարձրագույն մասնագիտական կրթության ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրեր և պլաններ:
4. Իրականացվում է նախադպրոցական կրթության բնագավառում աշխատող ղեկավար, մանկավարժական կադրերի ու սպասարկող անձնակազմի պատրաստումը, որակավորումը, մասնագիտական կատարելագործումը և ատեստավորումը:

5. Նախագծվում և արտադրվում են երեխաների տարիքային ու ֆիզիոլոգիական առանձնահատկություններին համապատասխան ուսումնական և կենցաղային գույք, խաղալիքներ, դիտողական նյութեր, իրականացվում է դրանց փորձաքննությունը:
6. Ուսումնասիրվում, վերահսկվում և գնահատվում է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների գործունեությունը:
7. Դիտարկվում, չափորոշվում-հաշվառվում է երեխայի ֆիզիկական, մտավոր, հոգևոր-հուզակամային /էմոցիոնալ/ զարգացման ընթացքն ու մակարդակը:
8. Իրականացվում է պետական և համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը:

Չափորոշչի ձևավորման հիմնական սկզբունքները

Չափորոշչի ձևավորման հիմնական սկզբունքները տրված են հանրակրթության պետական կրթակարգում: Դրանք են՝

- երեխաների զարգացման առանձնահատկությունների հաշվառում, կրթական աշխատանքի անհատականացման ապահովումը,
- երեխաներին ներկայացվող պահանջների և նրանցից ունեցած ակնկալիքների հստակ սահմանումը, մտքի և խոսքի ազատ դրսևորման ապահովումը,
- ուսումնադաստիարակչական գործունեությունը պլանավորելիս համալիր, բազմակողմանի և ներդաշնակ մոտեցման, խաղի գերակայության և խաղային գործունեության ապահովումը,
- զարգացնող առարկայական և ֆիզիկական միջավայրի ստեղծման կարևորումը
- ուսումնադաստիարակչական ծրագրերում խոսքի զարգացման, մայրենի լեզվով հաղորդակցվելու, տրամաբանական մտածողության, ինքնուրույն գործունեության տարբեր ձևերի տիրապետման, ֆիզիկական, բարոյագեղագիտական, հայրենասիրական, բնապահպանական, աշխատանքային դաստիարակության ապահովումը,
- բարեկիրթ վարքի դաստիարակման, ստեղծագործական ունակությունների, ընդունակությունների և հնարամտության առողջ սովորությունների զարգացման ապահովումը,
- ուսումնադաստիարակչական գործընթացում ընտանիքի գործուն դերի ապահովումը, ծնողների ներգրավումը,
- տարրական դպրոց երեխայի սահուն անցման ապահովումը:

Երեխաները լավ են սովորում այն միջավայրում, որտեղ բավարարվում են նրանց ֆիզիկական և հոգեբանական կարիքները, որտեղ նրանք իրենց պաշտպանված են զգում, գնահատվում են որպես յուրահատուկ անհատներ և ակտիվորեն ներգրավվում հմտություններ և գիտելիքներ ձեռք բերելու նպատակով կազմակերպված խաղերում և աշխատանքներում:

- Երեխաները ակտիվ սովորողներ են և ուզում են հասկանալ այն աշխարհը, որտեղ ապրում են,
- Երեխաները սովորում են խաղի միջոցով և խաղում,

- Իրենց գիտելիքները և արժեքները երեխաները կառուցում են հասակակիցների, ծնողների և այլ մեծերի հետ փոխհարաբերությունների, ինչպես նաև ֆիզիկական և հասարակական միջավայրի ակտիվ ուսումնասիրությունների միջոցով,
- Ընտանիքները /ծնողները/ երեխայի առաջին և կարևոր ուսուցիչներն են,
- Չկա իրար նման երկու երեխա: Երեխաների սեփական փորձը, վերաբերմունքը, հնտությունները և սովորելու ոճը ազդում են նրանց ուսումնառության վրա:

Չափորոշչային վերոհիշյալ սկզբունքներից հետևում է, որ բարձրորակ նախադպրոցական կրթության ապահովման համար կարևորվում են երեխան, ընտանիքը, մանկավարժը, ուսումնական ծրագրերը և կրթության կազմակերպման միջավայրը:

Նախադպրոցական կրթության չափորոշիչներով սահմանվում են այն անհրաժեշտ պայմանները, որոնցում կարող են լիարժեքորեն իրացվել երեխայի ազատ և համակողմանի զարգացման, նրա խնամքի, առողջության պահպանման ու ամրապնդման գործընթացները:

Նախադպրոցական կրթության ծրագրերը մշակվում են չափորոշչին համապատասխան և դիտարկվում որպես հանրակրթության բաղադրիչ՝ ապահովելով երեխայի կրթության շարունակությունը:

Չափորոշիչների կառուցվածքը

- Ոլորտները (ուսումնառության զարգացման ուղղությունները),
- Ենթաոլորտները (տյալ ոլորտի բաղկացուցիչ մասերը),
- Չափորոշիչները սահմանում են տվյալ ենթաոլորտում երեխայից ակնկալվող վարքագիծը,
- Ցուցիչները նշում են, թե երեխան ինչ գիտի և ինչ է անում կամ ինչպիսի դիտարկելի վարքագիծ է դրսևորում,
- Օրինակները բացատրում են յուրաքանչյուր ցուցչի իմաստը:

Չափորոշիչները դասակարգված են ըստ հետևյալ վեց ոլորտների

1. Շարժողական
2. Խոսք և լեզու
3. Իմացական
4. Հուզական, անձնային և սոցիալական զարգացում
5. Ինքնասպասարկում և անվտանգություն
6. Վերաբերմունք սովորելու նկատմամբ

Դերն ու նշանակությունը

Մանկավարժական հոգեբանության կոնկրետ խնդիրներն են

1. Բացահայտել ուսումնա-դաստիրակչական ազդեցությունների մտավոր ու անձնային զարգացման միջև կապի հոգեբանական օրինաչափությունները և մեխանիզմները

2. Որոշել սովորողի մտավոր, անձնային զարգացման և ուսուցման, դաստիարակության ձևերի, մեթոդների միջև կապը/ համագործակցային ուսուցում, ուսուցման ակտիվ ձևեր և այլն

3. Որոշել ուսումնական գործունեության կազմակերպման և կառավարման ազդեցությունը մտավոր, անձնային զարգացման վրա։

4. Հետազոտել ուսուցչի գործունեության և անձի հոգեբանական հիմքերը, մասնագիտական որակներ

5. Տարբեր տիպի խնդիրների լուծման ժամանակ, որոշել գիտելիքների յուրացման պայմանները, օրինաչափությունները, չափանիշներ

ԱԿՏԻՎ,ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

• Ուսումնական դրական խթանի ձևավորում,

• երեխաների ճանաչողական ակտիվության բարձրացում.

• Կրթական գործընթացին աշակերտների ակտիվ ներգրավում.

• Ինքնագործունեության խթանում,

• Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն

• Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,

• Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,

• երեխայի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,

• երեխայի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում,

1.2Տեղափոխությունները նախադպրոցականի կյանքում

Շատ կարևոր է, որ մանկավարժները կարողանան մեթոդապես ճիշտ կատարել երեխայի տնից մանկապարտեզ, խմբից խումբ տեղափոխությունները և այդ ուղղությամբ հատուկ աշխատանք տանեն ծնողների և երեխաների հետ:

Մանկապարտեզը ընտանիքի հետ համագործակցություն, հարմարեցված գործելակերպ ապահովելու նպատակով պետք է լավ իմանա երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունները, հարգի երեխային և ընդունի նրան այնպիսին, ինչպիսին կա՝ հոգ տանելով նրա զարգացման ու առաջընթացի մասին:

Եթե ծնողները և դաստիարակները հակադրվեն, անգամ մրցեն միմյանց հետ, երեխան անկասկած կզգա լարվածություն: Շատ ծնողներ երեխային հանձնելով օտար մարդու խնամքին, տագնապի զգացում են ապրում: Աջակից վերաբերմունք

տեսնելով, աստիճանաբար մեղմանում է երեխայի լարվածությունը: Հաստատելով համագործակցային հարաբերություններ, մեծահասակները սկսում են հետևել երեխայի զարգացմանը մեկ ընդհանուր տեսանկյունից: Հակառակ դեպքում երեխան երկմտանքի մեջ է ընկնում՝ ի՞նչ է կատարվում տանը և ինչ՝ մանկապարտեզում: Եթե մեծահասակները իրար հաղորդեն, համատեղ քննարկեն մանրամասներ երեխաների և նրանց հետ կատարվող նշանակալից դեպքերի, պոռթկումների, հաղթանակների կամ ստեղծագործական ձեռնարկումների մասին, ավելի ճիշտ պատկերացում կկազմեն, թե ինչպես է ձևավորվում անհատականությունը: Իմանալով, թե որքա՞ն է քնել երեխան, կերել, ի՞նչ խաղալիքով է սիրում խաղալ, ավելի ճիշտ կարելի է կազմել օրվա ծրագիր: Երեխաները հրճվանք են ապրում, երբ կարևոր մարդիկ գնահատում են իրենց նոր ձեռքբերումներն ու հմտությունները:

Զարգացման այս փուլում տանը և մանկապարտեզում գոյություն ունեցող արգելքները պետք է իրար համապատասխանեն՝ լինեն փոխհամաձայնեցված: Ծնողները և դաստիարակները միասին պետք է որոշեն, թե որ խաղերն են խրախուսելի տանը կամ ինչպես օգտագործել տնից բերված խաղալիքը մանկապարտեզում:

Հատկապես ՀԿՈՒ /հատուկ կարիքներ ունեցող/ երեխան կարող է ընկալել միայն մեծահասակի կողմից բացատրություններ ներկայացնելու և ծանոթացման միջոցով՝ ընդլայնելով և հարստացնելով գիտելիքների և պատկերացումների պաշարը:

Դաստիարակները առանց մոռանալու, որ ծնողները դիտվում են որպես երեխայի խնամքի և սիրո առաջնային աղբյուր, նրանց նախապատրաստում են զարգացման նոր փուլին: Տնից մանկապարտեզ, խմբից խումբ տեղափոխությունը և ընդհանրապես փոփոխությունները կարող են ցավագին ընդունվել երեխայի կողմից: Ավելի լուրջ դժվարություններ կարող են ծագել ՀԿՈՒ երեխաների ներառման դեպքում: Երեխաների սթրեսի չափը և այն հաղթահարելու ժամանակը կարող են նվազել, եթե մանկավարժները, ծնողները և հասարակությունն ընդհանրապես գործեն միասնական մարդասիրական սկզբունքներով: Երեխաների և նրանց ընտանիքների դյուրին անցումներն ապահովող հիմնական տարրերն են՝

- Զարգացման համապատասխան կրթական ծրագիր տարիքային բոլոր խմբերի համար, խառը և համամասնակցային խմբերում՝ անգամ մեկ երեխայի համար: Կարևոր է, որ ծրագրերը տարբեր լինեն՝ բխելով յուրաքանչյուր երեխայի տարիքային և անհատական առանձնահատկություններից, ընտանիքի կարիքներից և հետաքրքրություններից:
- Ծրագրի բովանդակության, ուսուցման մեթոդների, երեխաներին ներկայացվող պահանջների տարբերությունների հաշվառում:
- Ծրագրերի շարունակության ապահովում և դրանք իրականացնողների միջև տևական կապ ու համագործակցություն, որը կապահովի հարթ ու սահուն անցում ընտանիքից մանկապարտեզ, խմբից խումբ և այլն:
- Երեխաների նախապատրաստում տեղափոխության:

Զգուշացումներն անծանոթ իրավիճակների մասին. «Շուտով մանկապարտեզ կգնաս, այնտեղ նման բաներ թույլ չեն տա», «Դպրոցում ստիպված կլինես...» և այլն,

միայն ավելացնում են երեխայի տագնապները: Ավելի լավ կլինի՝ օրինակ, կակազող երեխան, մանկապարտեզ ընդունվելուց առաջ, իր աչքով տեսնի, թե ուր պետք է գնա: օգտակար կլինի նաև դպրոցից ստացած նամակը կամ հեռախոսազանգն այն մասին, որ երեխային այնտեղ սպասում են: Երեխային որոշակի ժամանակ է պետք հարմարվելու և կառավարելու հույզերը:
Ծնողներին համակած տագնապը նկատում է երեխան: Ծնողների մտահոգությունները փարատելուց հետո երեխան ինքնավստահ է զգում և հանգիստ է ընդունում փոփոխությունները:
Ծրագրերում ծնողների ներգրավումը և մասնակցությունը գործընթացին, օգնում են տեղեկանալու իրենց ներկայացվող պահանջներին և ակնկալիքներին:
Բացի նշված փոփոխություններից, երեխան ստիպված է լինում օրվա ընթացքում մի քանի անգամ մի վիճակից անցնել մի այլ վիճակի: Ծնողների և դաստիարակների համատեղ ջանքերի շնորհիվ հնարավոր է նվազագույնի հասցնել ամենօրյա մի վիճակից մի այլ վիճակի անցման վնասները:
Ալիկը /4 տարեկան/ մանկապարտեզ գնալու առաջին օրը տատիկի տված այն հարցին, թե ի՞նչ է արել մանկապարտեզում, ու՞մ հետ է խաղացել, պատասխանել է, որ քիչ է լացել, քանի որ ինքը մեծ է և ավելացրել, որ դաստիարակը միայն իր դաստիարակն է, մյուս երեխաները դաստիարակ չունեն: Եզրահանգենք, որ դաստիարակի ուշադրության կենտրոնում է եղել նորեկ Ալիկը: Նրանք երկուսով մայրիկի թողած հեռախոսով զանգահարել են տուն և իմացել, որ շուտով կգան Ալիկին տուն տանելու: Նման հնարներն օգնել են երեխային հարմարվել կյանքի պայմանների փոփոխությանը, գործել օտար միջավայրում:

ԳԼՈՒԽ 2

2.1ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայտնի է, որ մանկապարտեզը և ընտանիքը միմյանց փոխարինել չեն կարող: Նրանց միջև գործնական կապի ընթացքում ճշգրտում են ծնողների և մանկապարտեզի դաստիարակչական դիրքերը, որը նաև կարևորվում է երեխաներին դպրոցին նախապատրաստելիս:

Ծնողների հետ ցանկացած շփման ձև պետք է զուգակցել նրանց նկատմամբ ցուցաբերված մեծագույն հարգանքով: Կարելի է ծնողներից շատ բան սովորել, քանի որ նրանք ավելի լավ գիտեն իրենց երեխաներին:

Համագործակցելու լավագույն ձևերից են զրույցները, որոնց բովանդակության մասին պետք է նախապես մտածել: Հատկապես վճռորոշ են առաջին զրույցները՝ որպես ծնող-դաստիարակ մտերմության սկիզբ: Սա ժամանակի պահանջ է, քանի որ այժմ մանկապարտեզի հիմնական պատվիրատուն ընտանիքն է և նրա միջոցով պետք է որոշվի մանկապարտեզների գոյատևման հարցը:

Զրույցները արժե համեմել երեխայի կյանքի կոնկրետ օրինակներով, հնարամիտ արտահայտություններով: Դա կշռոյի ծնողի արժանապատվությունը: Կարելի է զրույցին մասնակից դարձնել նաև երեխաներին:

Ցանկալի է ավանդական ձևերից բացի դաստիարակության հիմնախնդիրների մասին երկխոսություն կազմակերպել «կլոր սեղանի» շուրջ: Բանավեճի նման ձևը հնարավորություն է ընձեռում բացահայտ ասելու սեփական կարծիքը, համատեղ գտնելու դաստիարակության ճիշտ ուղիները:

Շարժուն և ցրված երեխաներին անհրաժեշտ է վերաբերվել մեծագույն ուշադրությամբ՝ նրանց մեջ գտնելով դրական գծեր և ծնողների հետ զրույցի ժամանակ հենվելով միայն դրանց վրա: Պետք է խուսափել անընդհատ բողոքելուց, դա օտարացնում է ծնողներին մանկապարտեզից:

Զրույցի թեման ճիշտ ընտրելու, խոսքը կառուցելու և մտերմիկ զրույցի կայացման համար կարևոր է տնօրենի, դաստիարակի լավատեղյակ լինելը յուրաքանչյուր երեխայի ընտանեկան կացությանը, սոցիալական վիճակին, ընտանիքում տիրող փոխհարաբերություններին:

Երեխայի հետ պետք է աշխատել բարեխղճորեն, ծնողների հետ խոսել վայելուչ՝ ցուցաբերելով մեծագույն համբերատարություն:

Չպետք է մոռանալ, որ ծնողների հետ հաջողված յուրաքանչյուր համագործակցությունը մեծ արժեք ունի, որից երեխան միայն կշահի:

2.2Նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատանքները.

Պլանավորում և մեթոդներ

Նախադպրոցական ուսումնական հաստատության կոլեկտիվի աշխատանքը իրականացվում է հաստատության աշխատանքային պլանին համապատասխան: Ցանկացած պլան կառուցվում է ընթացիկ և առաջիկա (հեռանկարային) աշխատանքների միասնության մեջ նվազագույն ջանքերի ներդրմամբ՝ կոնկրետ

նպատակներին հասնելու, վերջնական որոշումների կայացման բարձր արդյունավետությամբ:

Պրակտիկան ցույց է տալիս, որ պլանն արդյունավետ է միայն այն դեպքում, եթե այն հենվում է մանկավարժական գիտության նվաճումների, առաջավոր փորձի ուսումնասիրության, տվյալ փուլում ծառացած և հեռանկարային խնդիրների հաշվառմամբ:Տարեկան պլանները առավել հաճախ ծանրաբեռնվում են միջոցառումներով, որոնք սովորաբար միմյանց հետ քիչ կապ ունեն և չեն արտացոլում աշխատանքի ամբողջական համակարգը՝ ի հայտ եկած գլխավոր պրոբլեմների ուղղությամբ:

Այս բոլորը բացատրվում է ուսումնադաստիարակչական աշխատանքների գործընթացի խոր և համակողմանի վերլուծության բացակայությամբ:

Վերահսկման գործընթացին ներկայացվողպահանջները.

1. Մշտական վերահսկողություն՝ ըստ նախապեսմշակած ժամանակացույցի:

2. Կրթադաստիարակչական բոլոր ուղղություններիներառում:

3. Կոլեկտիվի անդամների լայն ընդգրկում:

4. Տնտեսական և մեթոդական լուրջնախապատրաստվածություն:

5. Մանկավարժական աշխատանքի բոլորուղղությունների կապի ու փոխազդե ցությանապահովում:

6. Վերահսկման իրականացման համալիր ձևերի և մեթոդների կիրառում՝ կախ ված մանկավարժականաշխատանքի նպատակից, բովանդակությունից, դաստիա րակների որակավորումից, կոլեկտիվիանդամների փոխհարաբերությունից:

7. Վերահսկման հաղորդակցության պահպանում՝ նախապատրաստում, անհ րաժեշտտեղեկատվության հավաքում, վերլուծում, ժամանակացույցի, հուշաթե ղթի մշակում, ստուգմանանցկացում: Կոլեկտիվում արդյունքների ամփոփում, ո րոշումների կատարման ստուգում:

Ներկայացնում եմ մանկավարժական իրավիճակների օրինակներ.

1. Փոքրերի խմբի երեխաները խաղից հետո չեն հավաքել խաղալիքները: Դաստիարակի հիշեցումն անգամ չի օգնել գործին: Ինչպիսի՞ն պետք է լինի դաստիարակի վերաբերմունքը:

2. Երեխան ման է գալիս սենյակում, վերցնում այս կամ այն խաղալիքը, սակայն դրանցով չի խաղում: Ի՞նչ անել:

3. Երեք երեխա խաղում են մանկապարտեզի բակում, հրմշտում են իրար: Դաստիարակի դիտողությանը պատասխանում են, որ «Կռիվ» են խաղում: Ո՞րն է դաստիարակի անելիքը:

4. Խաղում միշտ նույն երեխան է առաջատարի դերը ստանձնում: Մյուս երեխաներին ինչպե՞ս հորդորել ակտիվանալու:

5. Երկու աղջիկ «Ընտանիք» խաղում ցանկանում են խաղալ մոր դերը, վիճում են: Ինչպիսի՞ն պետք է լինի դաստիարակի առաջարկած խաղը:

6. Ո՞րն է ճիշտ լուծումը:

Սեմինար պարապմունք

Տարիքային հոգեբանություն

Վաղ մանկությունը ընդգրկվում է 1-ից մինչև 3 տարեկան, որն աչքի է ընկնում զարգացման մի քանի նվաճումներով, ինչպիսիք են տեղաշարժվելու ընդունակությունը, ուղղահայաց կեցվածքը, առարկայական գործողությունները և խոսքի զարգացումը:

Կյանքի առաջին երեք տարիները երեխայի զարգացման համար այնքան կարևոր են, որ շատ հոգեբաններ ծնվելուց մինչև հասուն մարդ դառնալու միջին կետը համարում են երեք տարեկանը:

Նախադպրոցական տարիքը՝ 3-ից մինչև 6 տարեկանը, երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման ինտեսիվ շրջանն է: Այն բնութագրվում է երեխայի զարգացման սոցիալակնա նոր իրականության առաջացմամբ:

Նախադպրոցական խոսքի ձևավորումը սերտորեն կապված է ներքին խոսքի զարգացման հետ: Ներքին խոսքը լինելով խոսակցական լեզվի պլանը, կատարում է նախնական խորհրդածություն, մտքերի դասավորման և կազմակերպման ֆունկցիա: Ներքին խոսքի մասին հայտնի են Պիաժեյի և Վիգոտսկու տեսակետները: Պիաժեն գտնում է, որ նախադպրոցական երեխայի խոսքը ուղղված է դեպի ներս, երեխան խոսում է իր համար և իր մասին: Այդ խոսքը նա անվանեց էգոցենտրիկ (եսակենտրոն) խոսք: Ըստ Պիաժեյի, երբ երեխան ենթարկվում է սոցիալականացման, էգոցենտրիկ խոսքը անհետանում է: Վիգորսկին ապացուցել է, որ երեխայի ինքն իրեն համար ասած խոսքը ծագում է այն ժամանակ, երբ նրա կողքին զրուցակից չկա: Այդ խոսքը տարիքի հետ ոչ թե անհետանում է, այլ դառնում է խոսք ուրիշների համար:

Պիաժեն գտնում է, որ խոսքը կարելի է բաժանել երկու մեծ խմբերի՝ էգոցենտրիկ և սոցիալիզացված: Այս խոսքը էգոցենտրիկ է այն պատճառով, որ երեխան խոսում է միայն իր մասին: Էգոցենտրիկ խոսքը բաժանվում է երեք կատեգորիաների՝

1.Կրկնություն (էխոլազիա) – Սրան պատկանում է պարզ խաղի դերը: Երեխան հաճույք է ստանում բառերը զվարճանքի համար կրկնելիս՝ չդիմելով ոչ ոքի:

2.Մենախոսություն – Երբ երեխան ուղեկցում է իր գործողությունները բարձրաձայն արտահայտություններով: Նա հայտարարում է թե ինչ է ցանկանում անել՝ բավարարվելով միայն սեփական անձով՝ որպես զրուցակցի:

3.Կոլեկտիվ մենախոսություն – Երեխայի էգոցենտրիկ խոսքի ամենասոցիալակն ձևն է, որովհետև խոսելու հաճույքին ավելացվում է ուրիշների դիմաց մենախոսելու հաճույքը, այս կեպ մտածելով, թե գրավում ես նրանց հետաքրքրությունը սեփական մտքերիդ նկատմամբ:

Նախադպրոցական տարիքը, ըստ Ա.Ն. Լեոնտևի, «»անձի սկզբնական փաստացի պահեստի ժամանակաշրջանն է: Հենց այդ ժամանակ է տեղի ունենում հիմնական անհատական մեխանիզմների ու կազմավորումների ձևավորումը: Զարգանում են միմյանց հետ սերտ կապված հուզական և մոտիվացիոն ոլորտները, ձևավորվում է ինքնագիտակցությունը:

3-6 տարեկան երեխայի անձի զարգացման գործոններն են՝

- Նախադպրոցական սոցիալական իրավիճակը փոխվում է մանկապարտեզում՝ նոր պահանջներ են դրվում, յուրացնում է սոցիալական նորմները:
- Շփվում է հասակակիցների հետ:
- Փոխվում է գործունեության ոլորտը և յուրացնում է մի շարք ակտիվության ձևեր՝ նկարչություն, հեքիաթի ընկալում, սյուժետադերային խաղեր:

Լ.Ս. Վիգոտսկին առաջ քաշեց «ընթացիկ զարգացում» և «մերձակա զարգացման գոտի» հակացությունները: «Այն, ինչ երեխան ի վիճակի է կատարելու մեծահասակի օգնությամբ, ցույց է տալիս մեձակա զարգացման գոտին»: Այսպիսով, զարգացման մերձակա գոտին օգնում է մեզ որոշելու երեխայի զարգացման վաղվա օրը, նրա զարգացման դինամիկ վիճակը: Երեխայի մտավոր զարգացման վիճակը կարող է որոշվել առնվազն վերը նշված երկու մակարդակների բացահայտման միջոցով: Լ.Ս. Վիգոտսկու այս տեսակետը լայն արձագանք գտավ հոգեբանամանկավարժական ուսումնասիրություններում:

Պարապմունքի ընթացքում ուսումնասիրեցինք նախադպրոցական տարիքի երեխաների հոգեբանությունը Տարիքային հոգեբանությունը ընդհանուր հոգեբանության կարևոր ու հեռանկարային բաժիններից մեկն է: Այն զբաղվում է աճող և զարգացող մարդկային անձնավորության հոգեկան իմացական գործընթացների, հոգեկան հատկությունների և հոգեվիճակների տարիքային զարգացման ու ձևավորման հիմնախնդիրներով: Տարիքային հոգեբանությունը ձգտում է բացահայտել օնտոգենեզի հաջորդական փուլերի հոգեբնական բովանդակությունը, հոգեկան պրոցեսների տարիքային դինամիկան: Այս ամենը ուսումնասիրելու հոգեբանության այս բաժինը պետք է հաշվի առնի մշակութային, պատմական, էթնիկական և սոցիալ-տնտեսական պայմանների ազդեցությունը մարդու անհատական զարգացման վրա: Տարիքային հոգեբանության համար էական նշանակություն ունեն ակնհայտ սեռատարիքային տիպոլոգիական հատկություններն ու տարիքային տարբերությունները:Մանկության տարիք համարվում է 1-2 ամսականից մինչև 1 տարեկանը: Դեռևս ծննդյան առաջին օրերից երեխան զգայական շփման մեջ է գտնվում շրջապատող աշխարհի հետ:

Նախադպրոցական տարիքի երեխայի հիմնական պահանջմունքներից է նաև սիրո պահանջմունքը: Երեխայի համար չափազանց կարևոր է զգալ, որ իրեն սիրում են այնպիսին, ինպիսին նա կա իրականում: Այն դեպքում, երբ այս պահանջմունքը չի բավարարվում, տեղի է ունենում ֆրուստացիա, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ երեխայի ընդհանուր զարգացման վրա, քանի որ հենց 3-5 տարեկանն ընկած ժամանակահատվածում է մեծերի վերաբերմունքի հիման վրա ձևավորվում երեխայի ինքնագնահատականը:

ՏՆՕՐԵՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն Ա. Մելքոնյանն ասաց, ու սեմինարի թեման նպատակային էր։ Դաստիարակը բանիմաց,ճիշտ շարադրանքով ներկայացրեց, որ տարի քային հոգեբանությունը ընդհանուր հոգեբանության կարևոր և հեռան կարային բաժիններից մեկն է։Նա ասաց, որ ակնկալում է,որ սեմինար ից հետո մանկավարժները մեծ նշանակություն կտան երեխայի հոգեբ անությանը, քանի որ մեծերի վերաբերմունքի հիման վրա է ձևավորվո ւմ երեխայի ինքնագնահատականը։

Եզրակացություն

Այսպիսով մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման դասընթացում մեծ տեղ է հատկացվել այն հարցերին, որոնք վերաբերում են դաստիարակության և ուսուցման արդյունավետ պայմանների ապահովմանը և դրանց արդյունավետության բարձրացմանը, վերոնշյալ գործընթացներում անհատական և տարբերակված մոտեցումներին, ինչպես նաև սաների տարիքային և անհատական հոգեբանական առանձնահատկություններին: Դասընթացի ավարտին մանկավարժական աշխատողը պետք է կարողանա սաների շրջանում ձևավորել ճանաչողական հետաքրքրություններ և սովորածը գործնականում կիրառելու հմտություններ և մեթոդների նպաստել սաների ինքնասպասարկման, ինքնակառավարման և նախաձեռնողական կարողությունների զարգացմանը, արդյունավետ ներառել կրթության ու զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաներին և այլն:

Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին մանկավարժական աշխատողը պետք է իմանա նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հիմնական դրույթները, ծրագրերը և դաստիարակության մեթոդիկաները, երեխաների տարիքային և մանկավարժական հոգեբանության առանձնահատկությունները, ինչպես նաև մանկավարժական աշխատողներին ներկայացվող պահանջները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://podarilove.ru/hy/formy-i-metody-metodicheskoi-raboty-sovremennogo-doshkolnogo/
2. Մանկավարժական խորհուրդներ նախադպրոցական ուսումնական հաստատություններում / Կազմել է Կամալովա Ն.Ռ., Բլագուշկո Լ.Ն., Ստրելնիկովա Լ.Ն., Պետրովա Ա.Վ., Բաբչինսկայա Վ.Յու., Մուրչենկո Ն.Ա. - Վոլգոգրադ: Հրատարակչություն «Ուսուցիչ», 2016 թ
3. Belaya K. Yu. Մեթոդական աշխատանք նախադպրոցական ուսումնական հաստատությունում. M.: TC Sphere, 2008:
4. Ա. Գեւորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002,:
5. Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ:
6. . Արմինե Սարգսյան,Արման Մալոյան , Հայոց պատմություն 10-11 րդ դասարաններում :
7. . Բաբանսկի Յու . -Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում:
8. . Մուդրիիկ Ա.Վ.-Դպրոցականի անձը եւ նրա դաստիրակությունը կոլեկտիվում -Երեւան 1986